# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Փետրվարի 1-ին, երեքշաբթի. - Սրբոց Ղեւոնդեանց քահանայիցն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Դարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

***Փետրվարի 3-ին, հինգշաբթի. - Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ով որ Ինձ կխոստովանի մարդկանց առաջ, Ես էլ կխոստովանեմ նրան Իմ Հոր առաջ, որ երկնքում է» (Մատթ. Ժ 32) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 30):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

***Փետրվարի 6-ին, կիրակի. - Բուն Բարեկենդան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ջավեն քահանա Մարկոսյանը: «Հայր մեր»-ից առաջ «Ելի՛ր, կե՛ր, որովհետև երկար ճանապարհ ես գնալու» (Գ Թագ. ԺԹ 7) բնաբանով քարոզ խոսեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը (տե՛ս էջ 33):

Հընթացս Ս. Պատարագի ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցին: Կոնդակն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (տե՛ս էջ 6):

***Փետրվարի 13-ին, կիրակի. - Բ. կիր. Քառասնորդական Պահոց (Արտաքսման):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խորեն քահանա Կիրակոսյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Թադեոս վարդապետ Ջիրեկյանցը:

***Փետրվարի 14-ին, երկուշաբթի. - ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այդ լույսն էր ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու» (Հովհ. Ա 9) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 36):

***Փետրվարի 20-ին, կիրակի. - Գ. կիր. Քառասնորդական Պահոց: (Անառակին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դարույր քահանա Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ «Զի այս որդի իմ մեռեալ էր՝ եւ եկեաց, կո-

րուսեալ էր՝ եւ գտաւ» (Ղուկ. ԺԵ 24) բնաբանով քարոզ խոսեց Տ. Մոմիկ վարդապետ Սարգըսյանը (տե՛ս էջ 39):

***Փետրվարի 27-ին, կիրակի. - Դ. կիր. Քառասնորդական Պահոց (Տնտեսին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: «Հայր մեր»-ից առաջ «Եվ ես ձեզ ասում եմ. անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ» (Ղուկ. ԺԶ 9) բնաբանով քարոզ խոսեց Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը (տե՛ս էջ 42):

***Մարտի 6-ին, կիրակի. - Ե. կիր. Քառասնորդական Պահոց (Դատաւորին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տրդատ քահանա Բոզիկյանը: «Հայր մեր»-ից առաջ «Իսկ Որդի Մարդոյ եկեալ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի» (Ղուկ. ԺԸ 8) բնաբանով քարոզ խոսեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրըյանը (տե՛ս էջ 45):

***Մարտի 12-ին, շաբաթ. - Տօն է Սրբոյն Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ չարչարանացն եւ մտանելոյն ի Վիրապն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորայր աբեղա Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Մարտի 13-ին, կիրակի. - Զ. կիր. Քառասնորդական Պահոց (Գալստեան):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ադամ քահանա Մակարյանը: «Հայր մեր»-ից առաջ «Երկինք աթոռ Իմ են՝ եւ երկիր պատուանդան ոտից Իմոց. որպիսի՞ տուն շինիցէք Ինձ... եւ Ես յո՞ հայեցայց եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս» (Եսայի ԿԶ 1-2) բնաբանով քարոզ խոսեց Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը (տե՛ս էջ 49):

***Մարտի 20-ին, կիրակի. - Ծաղկազարդ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Մի երկնչիր, դուստր Սիովնի, ահաւասիկ թագաւոր Քո գայ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ» (Յովհ. ԺԲ 15) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 52):

***Մարտի 24-ին, հինգշաբթի. - Պահք:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը ընթերցեց Ս. Բարսեղ Կեսարացու՝ Ս. Հաղորդությանը նվիրված աղոթքը:

Երեկոյան կատարվեց Ոտնլվայի և ապա՝ Խավարման կարգը, հընթացս որի քարոզ խոսեց Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը (տե՛ս էջ 67):

*Մարտի 26-ին, շաբաթ. - Դահք: Ճրագալոյց Զատկի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ճրագալույցի Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Մարտի 27-ին, կիրակի. - ԶԱՏԻԿ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Նորին Սրբությունը «Ես իսկ եմ Յարութիւն եւ կեանք» (Յովհ. ԺԱ 25), «Ես եկի, զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին» (Յովհ. Ժ 10) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 3):

*Մարտի 28-ին, երկուշաբթի. - Բ. օր Զատկի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան աբեղա Հակոբյանը:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան արարողություն: